ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ԱՅԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 69 - 70 (17076) ՇԱԲԱԹ 3 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԳՈՐԾԱԴԻՐ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՒՄ Է ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐՈՎ

Օգոստոսի 29-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը, որտեղ վարչապետը մանրամասն խոսեց երկրի տնտեսական վիճակի, Վրաստանի տարածքում բռնկված հրդեհների սպառնալիքի վերացման աշխատանքների մասին:

ՎՐԱՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՄԻԱՆԱԼ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՆ

Վարչապետը, մասնավորապես, խոսեց եվրոպական վճարային տարածքին միանալու ուղղությամբ Վրաստանում վերջին մեկ տավա ընթաքում իրականացվող միջոցառումների հարցին:

- Ուզում եմ մեր քաղաքացիներին դրական տեղեկություն հայտնել՝ կապված Եվրամիության ինտեգրման հետ: Մենք պատրաստվում ենք միանալ միասնական եվրոպական վճարային տարածքին: Նման կազմակերպության անվանումն է SEPA, սա Եվրամիության եւ Եվրագոտու երկրներում հարկային ծառայությունների եւ պրովայդերների ներդաշնակեցման շրջանակն է, որի անդամները Եվրամիության 27 երկրներն են, ինչպես նաեւ Մեծ Բրիտանիան, Շվեյցարիան, Նորվեգիան, Իռլանդիան եւ Լիխտենշտեյնը: Մենք ակտիվորեն աշխատում ենք այդ ուղղությամբ: Ներգրավված են Ազգային բանկը, էկոնոմիկայի նախարարությունը, տարբեր պետական կառույցներ: Վրաստանի խորհրդարանը, որի հաստատմանը կուղարկվեն կառավարության այսօրվա նիստում ներկայացված երեք օրենքների նախագծերը, պետք է հաստատի եւ արտացոլի օրենսդրության համապատասխան փոփոխությունները, որոնք նույնպես շատ արդյունավետ են լինելու մեր քաղաքացիների համար: Ես կասեի, որ Եվրամիություն փոխանցումների համար այլեւս կարիք չի լինի օգտագործել թղթակից բանկ կամ միջնորդ, որը բավականին շահավետ է մեր քաղաքացիների համար,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՓԱՇԻՆՅԱՆ-ՄԻՇԵԼ-ԱԼԻԵՎ ԵՌԱԿՈՂՄ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Օգոստոսի 31-ին, Բրյուսելում կայացավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հանդիպումը:

Հանդիպման միջնորդ, Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի խոսքով՝ կողմերը պայմանավորվել են, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղ համաձայնագրի շուրջ էական աշխատանքները կշարունակվեն, եւ երկու երկրների արտգործնախարարների բանակցությունները կանցկացվեն հաջորդ ամսվա ընթացքում: Հանդիպմանը քննարկվել են նաեւ հայ ռազմագերիների ազատ արձակման, հայ-ադրբեջանական սահմանի սահմանազատման հարցերը:

Բրյուսելում նույն ձեւաչափով երեք հանդիպում արդեն իսկ կայացել է: Առաջին հանդիպումը տեղի է ունեցել 2021 թվականի դեկտեմբերի 14-ին, երկրորդը՝ 2022 թվականի ապրիլի 6-ին, երրորդը՝ 2022 թվականի մայիսի 23-ին:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼՈՒ ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՒԲԵՆ ՍԱԴՈՅԱՆԻ ՀԵՏ

Օգոստոսի 31-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հրաժեշտի հանդիպում ունեցավ Վրաստանում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի հետ:

Վրաստանի վարչապետը շնորհակալություն հայտնեց Ռուբեն Սադոյանին՝ վրաց-հայկական հարաբերությունների զարգացման գործում ունեցած ներդրման համար: Կողմերը վստահություն հայտնեցին, որ Ռուբեն Սադոյանի՝ դեսպանի պաշտոնավարման ընթացքում երկկողմ հարաբերություններում արձանագրված ձեռքբերումները կշարունակեն զարգանալ նաեւ հետագա տարիներին:

ԿՐԹԱԿԱՆ

ԱՅՍ ՏԱՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԹԻՎԸ ԲԱՎԱԿԱՆԻՆ ՄԵԾ ԷՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Ինչպես տեղեկացրել է Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնը, 2022 թվականի միասնական ազգային քննություններին մասնակցության հայտ էր ներկայացրել ավելի քան 41 հազար դիմորդ: Քննությունների վերջնական արդյունքներով նրանցից 32 100-ը, դիմորդների 77 տոկոսը, նվաճեց ուսումը բարձրագույն ուսումնական հաստատությունում շարունակելու իրավունք:

Այս տարի, որպես օրենք 28-29 հազարի փոխարեն, դիմորդների թիվը բավականին բաձր էր, շուրջ 41 հազար: Նրանցից 32 100-ը, այսինքն՝ դիմորդների ընդհանուր թվի 77 տոկոսը, ընդունվեց բուհ: Պետական դրամաշնորհ է ստացել շուրջ 6550 դիմորդ, որից ավելի քան 1000 դիմորդ ստացել է 100 տոկոսանոց դրամաշնորհ, 70 տոկոսը՝ մինչեւ 1500. 50 տոկոս

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՓՈՐՁԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԴԵՑ «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՁՆՈՂՆԵՐԻ ՎՐԱ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հուլիսի 16-ին եւ 20-ին Վրաստանում առաջին անգամ անցկացվեցին «Ադրբեջաներեն լեզվի եւ գրականության» ու «Հայոց լեզվի եւ գրականության» առարկայական քննությունները: Վերոնշյալ քննության եւ դրա արդյունքների կապակցությամբ, «Վրաստան» թերթը դիմեց Վրաստանի գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի ղեկավար Սոփո Գորգոձեին:

- «Հայոց լեզվի եւ գրականության» առարկայական քննությանը քանի՞ մասնակից էր գրանցվել:

- Նորանկախ Վրաստանի պատմության մեջ առաջին անգամ անցկացված հայոց լեզվի առարկայական քննությանը մասնակցելու ցանկություն էր հայտնել 425 հայցորդ:

- Քննության համար գրանցված մասնակիցներից քանիսի՞ն չհաջողվեց հաղթահարել իմացության նվազագույն շեմը:

- Ամենայն հավանականությամբ, առաջին անգամ անցկացվող նման քննության փորձի բացակայությունն իր դրոշմը թողեց մասնակիցների վրա, եւ արդյունքում, ցավոք, 350 հայցորդի չհաջողվեց հաղթահարել նվազագույն շեմը եւ հավեքել 70 հնարավորից առնվազն 43 միավոր:

- Ի՞նչ է սպասում այն հայցորդներին, ովքեր չեն հաղթահարել նվազագույն շեմը, նրանց կտրվի՞, արդյոք, երկրորդ անգամ քննությանը մասնակցելու հնարավորություն:

- Բնականաբար, նման հնարավորություն կտրվի: Այն ուսուցիչները, ովքեր այս տարի անցկացված քննությանը չկարողացան հաղթահարել նվազագույն շեմը, հաջորդ տարի քննությանը երկրորդ անգամ մասնակցելու հնարավորություն կստանան:

- Օրինակ, եթե ուսուցիչը հավաքել է 34 միավոր, որքանո՞վ է հնարավոր, որ պահպանի՞ ուսուցչի կարգավիճակը եւ շարունակի՞ իր մանկավարժական գործունեությունը:

- Ցավոք, այդ հարցը մեր իրավասություններին չի վերաբերում: Այդ հարցով ուսուցիչը պետք է դիմի Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոն:

- Ի դեպ, ո՞ւմ իրավասության շրջանակներում է որոշման կայացումն այն մասին, թե կպահպանի՞, արդյոք, մանկավարժն իր կարգավիճակը:

- Բնականաբար, Վրաստանի կրթության ու գիտության նախարարության եւ Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի:

- Ամենայն հավանականությամբ, հայցորդներից շատերը բողոքարկել են քննությունների արդյունքները: Կոնկրետ, «Հայոց լեզվի եւ գրականության» առարկայական քննության արդյունքները քանի՞ հայցորդ է բողոքարկել:

- Առարկայական քննության նախնական արդյունքների հրապարակումից անմիջապես հետո, Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոն ներկայացվել է 85 բողոք-հայց:

- Իսկ ե՞րբ կտրվի այդ բողոք-հայցերի պատասխանը:

- Բողոք-հայցերի արդյունքները կհրապարակվեն մինչեւ սեպտեմբերի 10-ը, Գնահատման եւ ազգային կենտրոնի կայքէջում:

ԳՈՐԾԱԴԻՐ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՒՄ Է ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ԲԱՑԱՌՎԱԾ ՉԷ, ՈՐ ՀՐԴԵՀՆԵՐԸ ԼԻՆԵՆ ԴԻՎԵՐՍԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔ

Օգոստոսի 29-ին, երկրի կառավարության նիստում, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին անդրադարձավ երկրի առանձին վայրերում, մասնավորապես, Բորժոմիի կիրճում, Շավնաբադում, Մառնեուլիի Շահումյան ավանում, Թբիլիսիում բռնկված հրդեհներին, նշելով, որ բացառված չէ, որ վերջիններս դիվերսիայի արդյունք լինեն:

- Շատերի մոտ կասկածներ առաջացան հրդեհի ծագման պատճառների վերաբերյալ: Ոմանք դա կապեցին մարդկային անփութության եւ արտակարգ շոգերի հետ, ոմանք էլ՝ բնորոշեցին դրանք որպես դիվերսիա: Այո, իսկապես բացառված չէ, որ դրանք լինեն դիվերսիայի արդյունք, հարկ է հետաքննություն անցկացնել՝ պարզելու համար,- հայտարարեց վարչապետը:

Անդրադառնալով հրդեհամարման աշխատանքներին, վարչապետն ընդգծեց ներքին գործերի նախարարության հրշեջ դեպարտամենտի, երկրի զինված ուժերի առանձին ստորաբաժանումների, կամավորների հստակ եւ համակարգված աշխատանքը՝ հավելելով, որ տեղանքի բարդությունը լուրջ դժվարություններ առաջացրեց: Վարչապետի խոսքով՝ դեռեւս Միխեիլ Սաակաշվիլու օրոք 10 տարի առաջ ձեռք բերած թանկարժեք «Սուպեր Պումա» ուղղաթիռը չի համապատասխանում փրկարարական տեխնիկական պահանջներին, այդ իսկ պատճառով էլ որոշում է կայացվել վաճառել այն, եւ ստացված գումարով գնել 3 նոր ուղղաթիռ:

ԾՐԱԳՐՎՈՒՄ Է 800 ԴՊՐՈՑԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ-ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Անդրադառնալով առաջիկա լայնածավալ ծրագրերին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, կառավարության օգոստոսի 29-ի նիստում, հայտարարեց, որ գործադիրը ծրագրել է իրականացնել 800 դպրոցների շինարարության-վերանորոգման նախագիծ, որի արժեքը կազմում է շուրջ 1 միլիարդ լարի:

- Անցյալ շաբաթ հանդիպեցի կրթության նախարարի հետ եւ մանրամասն քննարկեցինք 800 դպրոցների շինարարության-վերանորոգման նախագիծը, որի մոտավոր արժեքը կազմում է 1 միլիարդ լարի: Սեպտեմբեր-հոկտեմբերին կհայտարարվի մրցույթ՝ 80 նոր դպրոցի շինարարության եւ 320 դպրոցի վերանորոգման ուղղությամբ: Մնացած 400 դպրոցների վերանորոգման մրցույթները կհայտարարվեն 2023-2024 թվականներին,- ասաց վարչապետը եւ հավելեց, որ կառավարության ծրագրով, 800 դպրոցների շինարարության-վերանորոգման նախագիծն ավարտվելու է մինչեւ 2026 թվականը:

- Ընդ որում, մինչեւ 2024 թվականն ավարտվելու է 400 դպրոցների շինարարություն-վերանորոգումը: Բացի այդ, համապատասխան գերատեսչություններին հանձնարարվել է նմանօրինակ նախագիծ մշակել մանկապարտեզների համար,-ընդգծեց վարչապետը:



ՄԱԿ

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԱՐԳԵԼԱՓԱԿԵՑ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ

Օգոստոսի 29-ին՝ Միջուկային փորձարկումների դեմ գործողությունների միջազգային օրը, Ռուսաստանը ՄԱԿ-ի համաժողովում արգելափակեց միջուկային զինաթափման մասին համատեղ հռչակագրի ընդունումը:

Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագիրը, որը ստորագրում են 191 երկրներ հինգ տարին մեկ, նպատակ ունի կանխել միջուկային զենքի տարածումը:

Ռուսաստանը լուրջ մտահոգություն է հայտնել փաստաթղթի տեքստի եւ Զապորոժյեի ատոմակայանի շուրջ ծավալվող ռազմական գործողությունների կապակցությամբ:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՑԻՆԵՐԻ ԱՅՑԵԳՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԳԵԼՔԸ ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ

Եվրամիության անդամ երկրների ԱԳ նախարարությունների ղեկավարները չեն կարողացել համաձայնեցնել ռուսաստանցիներին այցեգրեր տալու ընդհանուր արգելքը, քանի որ շատերը դեմ են հանդես եկել:

Դրա հետ մեկտեղ, Եվրամիությունը որոշում է ընդունել լուծարելու Ռուսաստանի հետ այցեգրային ռեժիմի դյուրացման պայմանագիրը, ինչի օգտին քվեարկել է միավորման պետությունների մեծամասնությունը:

Ինչպես հայտարարել է Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը, եթե Եվրամիությունը ռուսաստանցիներին այցեգրեր տալու սահմանափակումներ մտցնի, ապա նրանց քաղաքացիները նույնպես անհարմարությունների կբախվեն սահմանները հատելիս:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՎԵՑ

Ռուսական «Գազպրոմ»-ը, օգոստոսի 31-ին, երեք օրով դադարեցրեց գազամատակարարումը Գերմանիա «Հյուսիսային հոսք 1» խողովակաշարով՝ պատճառաբանելով դա անհրաժեշտ տեխնիկական սպասարկման բարելավմամբ:

Սակայն գերմանական կողմը այս դադարն անվանել է տեխնիկապես անհասկանալի որոշում, մտավախություն հայտնելով, որ հավանական է, որ սա Մոսկվայի կողմից պատրվակ է՝ հերթական անգամ ցույց տալու «գազային մահակը»:

ՄԱՀԱՑԵԼ Է ՄԻԽԱՅԻԼ ԳՈՐԲԱՉՈՎԸ

Օգոստոսի 31-ին, 91 տարեկան հասակում, հիվանդանոցում երկարատեւ ու ծանր հիվանդությունից հետո, մահացել է նախկին Խորհրդային Միության առաջին նախագահ Միխայիլ Գորբաչովը:

Նշենք, որ Միխայիլ Գորբաչովը ԽՄԿԿ Կենտկոմի վերջին գլխավոր քարտուղարն էր եւ Խորհրդային Միության առաջին եւ վերջին նախագահը:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՉՆԱՅԱԾ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ, ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻՆ ՍՏՈՐԱԳՐԵՑ ԴԱՎԻԹ ԲԱՔՐԱՁԵԻՆ ՄԱԿ-ՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին ստորագրել է ՄԱԿ-ում Վրաստանի դեսպանի պաշտոնում Դավիթ Բաքրաձեի նշանակումը:

Բացի այդ, ինչպես հայտարարում է նախագահի վարչակազմը, դեսպանների վերաբերյալ նախագահին ներկայացված բոլոր պաշտոնական փաստաթղթերը բավարարվել են, եւ նախագահի կողմից ուշացումներ չեն եղել:

Դավիթ Բաքրաձեն նշված պաշտոնում կփոխարինի Կախա Իմնաձեին:

Հիշեցնենք, որ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին այս տարվա հուլիսի 22-ին հայտարարել էր, որ իր նախագահության ժամանակ առաջադրված 37 դեսպաններից նա ստորագրել էր 36-ի մասին որոշումը, եւ Դավիթ Բաքրաձեն 37-րդն էր: Չնայած նրա, որ նախագահը ստորագրեց հրամանագիրը, այդուհանդերձ, Վրաստանի նախագահի վարչակազմի ղեկավար Նաթիա Սուլավան նշեց, որ Սալոմե Զուրաբիշվիլու գնահատականը Դավիթ Բաքրաձեի նախորդ գործունեության վերաբերյալ բացասական է: Նշենք, որ նախագահը հանդես է եկել հետեւյալ հայտարարությամբ.

- Նա 5 տարի դեսպան է եղել Ամերիկայում եւ ոչինչ չի արել մեր հարաբերությունների համար, նրան պետք է չնշանակեն ՄԱԿ-ում, նա պետք է այլ տեղ գնա:

Մեկնաբանելով նախագահի դիրքորոշումը, «Վրացական երազանք» խմբակցության նախագահ Մամուկա Մդինարաձեն հայտարարեց, որ նախագահի լիազորությունները սահմանվում են Վրաստանի Սահմանադրությամբ եւ շատ ցավալի է, որ կառավարության այս իրավասության եւ դրա շրջանակի վերաբերյալ որոշ հրահանգներ են պետք, այդ թվում՝ սահմանադրական հայցի տեսքով:

- Նախագահը պետք է ստորագրի կառավարության կողմից առաջադրված թեկնածուի հաստատման փաստաթուղթը, որը եւ այս պարագայում իրականացրեց: Այնինչ, մեր ընդդիմախոսները նախագահի իրավական գործողությունն անվանում են «պատանդություն»,- շեշտեց Մամուկա Մդինարաձեն:

Նշենք, որ ՄԱԿ-ում Վրաստանի դեսպանի տարեկան պաշտոնական աշխատավարձը կազմում է 138 հազար դոլար, ինչը Վրաստանի դիվանագիտական ծառայության ամենաբարձր աշխատավարձն է:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻՑ ՀՐԱԺԱՐՎԵՑԻՆ ԵՎ ԱԽԱԼԳՈՐԻԻ ՈՒ ՋԱՎԱՅԻ ՄԻՋԵՎ ԱՆՑԱԿԵՏԵՐ ԲԱՑԵՑԻՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, ինքնահռչակ Հարավային Օսեթիայի նախկին նախագահ Անատոլի Բիբիլովը բարձրացրել է Հարավային Օսեթիան Ռուսաստանի կազմում միավորելու գաղավարը եւ այդ հարցով մտադրվել էր անցկացնել համընդհանուր հանրաքվե:

2022 թվականի գարնանը, այսպես կոչված, նախագահական ընտրություններում հաղթանակած Ալան Գագլոեւը, հրամանագրով չեղյալ հայտարարեց վերոնշյալ հանրաքվեի անցկացումը: Ավելին, ինքնահռչակ Հարավային Օսեթիայի հանրապետության նորընտիր նախագահի նախաձեռնությամբ, Վրաստանի կենտրոնական իշխանության կողմից չվերահսկվող Ցխինվալիի ուղղությամբ ազատ տեղաշարժի շուրջ երեք տարվա սահմանափակումներից հետո, «անցակետերը» բացվեցին, ինչը նշանակում է, որ, յուրաքանչյուր ամսվա 20-ից մինչեւ ամսվա վերջ, քաղաքացիներն իրավունք ունեն տեղաշարժվելու համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում:

Պաշտոնական հայտարարություններում վրացական կողմը՝ ի մասնավորի Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական հավասարության հարցերով նախարարությունը ողջունել է մարդասիրական մոտեցմամբ ձեռնարկված քայլերը. «Վրաստանի կառավարությունն առավելագույն ջանքեր է գործադրում ապահովելու բնակչության՝ ապահով միջավայրում ապրելու եւ ազատ տեղաշարժի հիմնարար իրավունքը՝ օգտագործելով առկա բոլոր մեխանիզմները եւ սերտ համագործակցելով միջազգային գործընկերների հետ»:

Օսեթական կողմի տեղեկությամբ՝ օգոստոսի 20-ից 28-ը Վրաստանից չվերահսկվող Ախալգորիի եւ Զավայի շրջանների ուղղությամբ բացված «անցակետերից» օգտվել է 3 026 մարդ:

ՌՈՒՍ - ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ. 191-ՐԴ ՕՐ

ԿԱՅԱՑԱՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Վրաստանի արտաքին գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլին, Պրահայում ընթացող Եվրամիության արտաքին գործերի նախարարների ոչ պաշտոնական հանդիպման շրջանակներում, հանդիպել է ուկրաինացի գործընկեր Դմիտրո Կուլեբայի հետ:

Իլիա Դարչիաշվիլին եւս մեկ անգամ հաստատել է իր ուկրաինացի գործընկերոջը Վրաստանի հաստատակամ աջակցությունն Ուկրաինային, եւ հույս հայտնել, որ պատերազմը շուտով կավարտվի, եւ երկրում խաղաղություն ու կայունություն կհաստատվի:

ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ՁՈՀՎԵՑ ՎՐԱՍՏԱՆՑԻ 19-ՐԴ ԶԻՆՃԱՌԱՅՈՂԸ

Վրաստանի արտաքին գործերի նախարարության տեղեկությամբ, Ուկրաինայում եւս մեկ վրացի մարտիկ է զոհվել:

Վիրավորվել են եւս երեքը: Գերատեսչության տվյալներով՝ նրանք տեղափոխվել են հիվանդանոց եւ ստանում են համապատասխան բուժում:

Ուկրաինայում ռուսական ռազմական ագրեսիայի սկզբից ի վեր արդեն 19 վրացի մարտիկ է զոհվել:

ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԸ ԶԱՊՈՐՈԺՅԵԻ ԱՏՈՄԱԿԱՅԱՆՈՒՄ

Ատոմային էներգիայի միջազգային գործակալության տեսուչները, մեծ շարասյունով ժամանել են ռուսների կողմից վերահսկվող Զապորոժյեի ատոմակայանի տարածք:

Միջազգային տեսուչները պետք է ուսումնասիրեն կայանի անվտանգության ներկայիս իրավիճակը:

Էջը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԵՆՔ ԱՉՔ ԿՓԱԿԵՆՔ ԻՐԱՎԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ»

«Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ ելնելով այն հանգամանքից, որ Եվրամիության սահմանած 12 կետերի կատարումը առանձնահատուկ առաջնահերթություն է երկրի համար, որպես բացառություն, աչք կփակեն իրավական սկզբունքների վրա եւ կընդունեն գլխավոր դատախազին՝ նոր օրենքն ընտրելով առանց որեւէ նախապայմանի:

Իրակլի Կոբեխիձեն նշեց, որ արմատական ընդդիմության սաբոտաժի ֆոնին «Վրացական երազանքը» ակտիվ աշխատում է Եվրամիության սահմանած 12 կետերի կատարման ուղղությամբ:

- Վրաստանի գլխավոր դատախազի ընտրության կարգի վերանայումը նշված է 12 կետերի մեջ: Այս վերապահումն իրականացնելու համար, խորհրդարանական մեծամասնությունը պաշտոնապես նախաձեռնեց սահմանադրական օրենքի նախագիծը՝ այն ճշգրիտ բովանդակությամբ, որը համաձայնեցվել էր անցյալ տարի մեծամասնության եւ խորհրդարանական ընդդիմության միջեւ կայացած խորհրդակցությունների հիման վրա: Օրենքի նախագծի համաձայն՝ հաջորդ երկու գումարումների խորհրդարանը, ձայների 3/5-ի մեծամասնությամբ, վեց տարի ժամկետով կընտրի Վրաստանի գլխավոր դատախազին, իսկ եթե թեկնածուն չստանա ձայների 3/5-ը, ապա՝ Գլխավոր դատախազը կընտրվի ձայների մեծամասնությամբ, բայց մեկ տարի ժամկետով,-հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻՑ ՔՐՈՆԻԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿՍԱՀՄԱՆՎԵՆ ՌԵՖԵՐԵՆՏԱՅԻՆ ԳՆԵՐ

Ինչպես հայտարարեց Վրաստանի առողջապահության նախարար Զուրաբ Ազարաշվիլին, Թուրքական շուկայի բացումից հետո, նախարարությունը հրապարակում է բնակչության խնայողությունների մասին տեղեկատվություն, ակնհայտ դարձնելու համար, թե ինչպես են տնտեսվել տասնյակ միլիոնավոր լարիներ:

- Մենք ենթադրում ենք, որ տարվա ընթացքում մեր բնակչությունը կտնտեսի մոտ 180-ից 200 մլն լարի, ինչը բավական մեծ գումար է: Սա միմիայն՝ թուրքական դեղամիջոցների դեպքում: Բացի այդ, ռեֆերենտային գների հաստատումից հետո՝ ակնկալում ենք նաեւ գների զգալի նվազում,- նշեց Զուրաբ Ազարաշվիլին՝ հավելելով, որ եվրոպական գրեթե բոլոր երկրներում, ինչպես նաեւ մի շարք հարեւան երկրներում, որտեղ արդեն սահմանվել են դեղերի շեմային գները, դեղորայքի ինքնարժեքը նվազել է 40-70 տոկոսով:

- Հաջորդ տարվա հունվարից կունենանք քրոնիկական հիվանդությունների դեղամիջոցների եւ ուռուցքաբանական դեղորայքի ռեֆերենտային գներ, որոնք նախնական փուլում կգործարկվեն պիլոտային ռեժիմով: Հաջորդ փուլում ամբողջությամբ կսահմանվեն ռեֆերենտային գներ, եւ դա կտարածվի ցանկացած դեղամիջոցի վրա,- հայտարարեց Զուրաբ Ազարաշվիլին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՏԱՍԸ ԵՐԿՐՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՎՐԱՍՏԱՆՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԵԼ ԵՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Միացյալ Նահանգները, Վրաստանը, Հայաստանը, Ուկրաինան եւ վեց այլ երկրներ համատեղ հայտարարություն են տարածել համաշխարհային առողջապահական անվտանգության ապահովման մեջ սպառնալիքների նվազեցման համատեղ գործընկերությունների ներդրման վերաբերյալ:

Հայտարարության տեքստը հրապարակել է ԱՄՆ-ի Պետդեպարտամենտը, եւ այն ստորագրած երկրներն են ԱՄՆ, Վրաստանը, Հայաստանը, Ուկրաինան, Իրաքը, Հորդանանը, Լիբերիան, Ֆիլիպինները, Սիեռա-Լեոնեն եւ Ուգանդան:

«Կովիդ»-ի համավարակն ընդգծել է ինֆեկցիոն հիվանդությունների վերահսկման, ախտորոշման եւ արձագանքման ազգային հզոր կարողությունների կարեւորությունը: Միջազգային համագործակցությունն ու օգնությունը վճռորոշ դեր են խաղում այդ կարողությունների ամրապնդման գործում: Մեր կառավարությունները բաց եւ թափանցիկ համագործակցում են Կենսաբանական սպառնալիքների նվազեցման ծրագրի միջոցով, որը ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության սպառնալիքների նվազեցման համատեղ ծրագրի մի մասն է: Այս գործընկերությունները միայն խաղաղ նպատակներ ունեն: Մեր կառավարությունները վճռականորեն հաստատում են ընդհանուր կարծիքն առ այն, որ նման համագործակցությունը պետք չէ խզել, այլ պետք է խրախուսել ու ամրապնդել: Համաձայն 10-րդ հոդվածի՝ մենք կոչ ենք անում Կենսաբանական զենքի մասին կոնվենցիայի մասնակից բոլոր պետություններին միասին աշխատել հանուն այս նպատակի՝ ներառյալ գալիք Վերանայման համաժողովը»,- ասված է ԱՄՆ Պետքարտուղարության կայքում տեղադրված համատեղ հայտարարության մեջ:

ՆՇՎԵՑ ՄԱՐԻԱՄՈԲԱՆ

Օգոստոսի 28-ին Վրաց Ուղղափառ եկեղեցին նշեց Մարիամ Աստվածածնի վերափոխումը, Մարիամոբան: Տոնի կապակցությամբ բոլոր գործող եկեղեցիներում ու վանքերում մատուցվեց հանդիսավոր Սուրբ պատարագ: Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, Սիոնի տաճարում քահանայապետերի եւ հոգեւորականների հետ, մատուցեց Սուրբ պատարագ:

Պատարագի ավարտին՝ Պատրիարքը շնորհավորեց տոնի առիթով եւ ավանդական քարոզով դիմեց հավատացյալներին:

ԳԻՈՐԳԻ ԱԼԱԴԱՇՎԻԼԻՆ՝ ԿԱԽԵԹԻԻ ՊԵՏԱԿԱՆ ԼԻԱԶՈՐ

Գիորգի Ալադաշվիլին նշանակվել է Կախեթիի նահանգապետ. նշված պաշտոնում նա փոխարինել է Իրակլի Շիոշվիլուն:

Օգոստոսի 29-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ եկրամասի նախկին եւ նորանշանակ նահանգապետերի հետ: Հանդիպմանը քննարկվեցին տարածաշրջանում ընթացիկ եւ նախատեսվող ծրագրերը:

Իրակլի Ղարիբաշվիլին շնորհակալություն հայտնեց Իրակլի Շիոշվիլուն կատարած աշխատանքի համար, իսկ նորընտիր նահանգապետին հաջողություն մաղթեց:

Կախեթիի նոր նահանգապետը մասնագիտությամբ իրավաբան է: Ունի ակադեմիական մագիստրոսի կոչում Հարվարդի համալսարանից: Գիորգի Ալադաշվիլին տարբեր բարձր պաշտոններ է զբաղեցրել ներքին գործերի նախարարությունում եւ պետական անվտանգության ծառայությունում:

COVID - 19

ԿՈՎԻԴՈՎ ՎԱՐԱԿՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ ՏԱԳՆԱՊԱԼԻՈՐԵՆ ԱՎԵԼԱՆՈՒՄ ԵՆ

13 737 ՎԱՐԱԿՄԱՆ ԵՎ 3 ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔ՝ ՄԵԿ ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Անցած շաբաթվա ընթացքում Վրաստանում գրանցվել է կորոնավիրուսով վարակման 12 595 նոր դեպք: Առողջացել է 13 737 բուժառու, 3-ը մահացել են: Այս մասին տեղեկությունը տարածել է Վրաստանի Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը:

Մեկ շաբաթվա ընթացքում Վրաստանում 76 հազար 704 թեստավորում է կատարվել: 7-օրյա թեստավորման դրական ցուցանիշը կազմում է 17,00 տոկոս:

Էջը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԲԻՃԻՆԱ ԿՈՒԼՈՒՄԲԵԳՈՎ. «ԹԵԵՎ ՊԻԿԸ ԱՆՑԵԼ ԵՆՔ, ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԲԱՎԱԿԱՆԻՆ ԲԱՐՁՐ Է»

Ըստ ալերգոլոգ-իմունոլոգ Բիձինա Կուլումբեգովի՝ երկրում կորոնավիրուսի դրական դրսեւորման վերջին 7 եւ 14 օրերի ցուցանիշը բարձր է, ինչը վկայում է ներքին տարածման բավականին լայն ծավալի մասին:

Բիձինա Կուլումբեգովի պարզաբանմամբ՝ այս փուլում կորոնավիրուսի տարածումը բավական բարձր է, թեեւ երկիրն արդեն անցել է պիկ շրջանը:

- Եթե նայենք նախորդ երկու շաբաթվա տվյալները, ապա բավական բարձր դրական ցուցանիշներ ունենք: Վերջին յոթ ու տասնչորս օրերը կազմում են գրեթե 17 տոկոս, ինչն աննախադեպ բարձր ցուցանիշ է, որը վկայում է հանրային ներքին տարածման բարձր մակարդակի մասին:

Առողջապահության չափման ամերիկյան ինստիտուտի տվյալներով, օրական երկրում կարող է լինել միջինը 6000-20000 նոր դեպք: Մակարդակը կարող է պահպանվել մինչեւ սեպտեմբեր եւ նույնիսկ հոկտեմբերի առաջին կեսը: Ամենայն հավանականությամբ, առաջիկա 4-6 շաբաթվա ընթացքում կտրուկ աճ չենք տեսնի: Չի ակնկալվում, որ կլինի վարակի ողբերգական բռնկում, որը կհանգեցնի կլինիկաների ծանրաբեռնվածության,- նշել է Բիձինա Կուլումբեգովը եւ հավելել, որ այսօր Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն ասում է, որ աշխարհում կորոնավիրուսի ավարտը դեռեւս չի երեւում:

- Այդ իսկ պատճառով ոչ ոք չի շտապում համաճարակն ավարտված հայտարարել, եւ երկրներին կոչ է արվում մեծացնել թեստերն ու հայտնաբերել վարակները: Ոչ ոք չի կարող նախապես կանխատեսել, բայց դա կարող է լինել 2023 թվականի վերջին, երբ համաշխարհային համաճարակը կարող է հայտարարվել՝ որպես կառավարելի վարակ, այսինքն, էնդեմիկ մաս: Ցավոք սրտի, դրա նշանները դեռ չկան, քանի որ աշխարհում շաբաթական մոտ 15000 մարդ է մահանում կորոնավիրուսից,- ընդգծել է Բիձինա Կուլումբեգովը:

ՀՐԱՏԱՊ

ՕԹԱՐ ՇԱՄՈՒԳԻԱ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ ՑՈՐԵՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄՆ Է ԵՎ ԻՆՔՆԱԲԱՎՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ»

ՀԱՅԻ ԵԶՐԱՅԻՆ ԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԿԿԱՆԽԻ ՀԱՅԻ ԹԱՆԿԱՑՈՒՄԸ

Վերջին ժամանակներում Վրաստանում ալյուրի գինը նվազում է, սակայն մինչ այժմ այն չի փոխանցվել ցանցային մարկեթինգին:

Վրաստանի բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարար Օթար Շամուգիան, անդրադառնալով հացի գնի հարցին, հայտարարեց, որ պետության նպատակը, առաջին հերթին, տեղական արտադրության խթանումն է եւ ինքնաբավության մակարդակի բարձրացումը:

- Մեր այցի շրջանակներում հանդիպումներ ունեցանք Ամերիկայի Միացյալ Նահանգների մեր գործընկերների հետ: Ակնկալում ենք սկսել առաջին փուլը՝ արժեշղթայի ուսումնասիրությունը մեր ամերիկացի գործընկերների օգնությամբ: Հաջորդիվ կբացահայտվեն այն կարիքները, որոնցում անհրաժեշտ կլինի աջակցություն: Ելնելով ուսումնասիրությունների արդյունքներից՝ մենք որոշումներ կկայացնենք աջակցող միջոցառումների վերաբերյալ,- ասաց **Օթար Շամուգիան**՝ հավելելով, որ լավ միտում կա ե'ւ ցորենի, ե'ւ ալյուրի գների իջեցման ուղղությամբ եւ նշված միտման պահպանումը կազդի հացի գնի վրա՝ նվազում արձանագրելով:

Նախարարի խոսքով, միայն օգոստոսին Վրաստան է մուտք գործել մոտավորապես 25 հազար տոննա ցորեն: Կրճատվել է արտահանման հարկը, ինչը կօգնի գործարաններին նորմալ աշխատել:

Իր հերթին, «Վրաստանի հացի արդյունաբերության միության» նախագահ Մալխազ Դոլիձեն ներկայացրել է հացի գնի եզրային գներ սահմանելու պահանջը, ինչը, նրա համոզմամբ, նշանակում է, որ պետությունը խանութների վաճառքի առավելագույն գին չի սահմանի, իսկ խանութները չեն կարողանա կամայականորեն թանկացնել:

Մալխազ Դոլիձեի խոսքով, անցյալ տարվա համեմատ, ալյուրը համաշխարհային շուկայում էժանացել է, մաքսային հարկն էլ նվազել, ուստի հացի գինը հնարավոր է իջեցնել, թեեւ այս փուլում դա խանութների որոշումն է:

Նրա տվյալներով՝ երկրում տարեկան սպառվում է 650 հազար տոննա ցորեն, որից 150 հազար տոննան արտադրվում է Վրաստանում: Ինչպես ասում է Մալխազ Դոլիձեն, ի տարբերություն մյուս տարիների, այս տարի Վրաստանում հարուստ բերք կա:

- Անցյալ տարի համաշխարհային շուկայում ցորենի գինը բարձրացավ մինչեւ 500 դոլար: Հիշու՞մ եք այն լողացող սակագինը, որ դրվեց Վրաստանի վրա ու դրան ավելացվեց 85 դոլար: Այսօր միտումը փոխվել է: Այսօր համաշխարհային շուկայում 1 տոննա ֆրանսիական ցորենը արեժե 345 դոլար, ամերիկյանը՝ 346 դոլար, ռուսականը՝ 347 դոլար: Բացի այդ, լողացող տուրքը, որը գործում էր մեր նկատմամբ, էապես նվազել է եւ ցորենի առքը ու տեղում ստացումը հնարավոր է դարձել կոմբինատորների աշխատանքի շնորհիվ, որը շատ լավ միտում է:

Երբեք չի եղել, որ ներկրվող ալյուրի եւ տեղական ալյուրի գներն այսքան մոտ լինեն իրար: Դեղերի համար սահմանվել են ռեֆերենտ գներ, ինչը նշանակում է, որ մենք գիտենք, թե որքանով է դեղը ձեռք բերվում դրսում, որքան արժե տեղափոխումը, որքան է հարկը, այսինքն՝ գինը լիովին վերահսկվում է: Ես ողջունում եմ այս առաջարկը եւ վատ չէր լինի, որ տվյալ փորձը կիրառվեր նաեւ այս պարագայում: Մարդիկ գիտեն, որ դա ոչ թե համաշխարհային շուկան է թելադրում, այլ խանութների սահմանած գինը,- ասաց Մալխազ Դոլիձեն:

Վրաստանում ալյուրի գնի նվազումը հաստատում է նաեւ Վրաստանի ցորեն եւ ալյուր արտադրողների ասոցիացիայի գործադիր տնօրեն **Լեւան Սիլագավան:**

Նրա խոսքով, ալյուրի գինը նվազում է, սակայն մինչ այժմ միտումը չի փոխանցվել ցանցային մարկեթինգին եւ, եթե ցանցային շուկաները չներառվեն շղթայում, եւ այդ գործընթացը չվերահսկի պետությունը, «չենք իմանա՝ ալյուրի գնի նվազումը կազդի՞ սպառողի վրա, թե՞ ոչ»:

Ըստ Լեւան Սիլագավայի՝ Վրաստանում հավաքվել է 100 տոննա ցորեն, թեեւ Ռուսաստանից ներկրվում է 5 անգամ ավելի, ինչը նշանակում է, որ ինքնաբավությունը պետք է մեծացնել:

- Մեկ ամիս առաջ առաջին որակի ալյուրի 1 պարկը 85 լարի էր, այսօր իջել է 80 լարի: Ըստ կիրառվող փորձի, պետությունը վերահսկողություն է իրականացնում առաջնային պահանջարկի ապրանքների նկատմամբ բոլոր շղթաներում, բոլոր փուլերում: Պետությունը հայտարարել է առաջնային պահանջարկով ապրանքների տեղեկանքային գների ներդրման մասին, ինչը նշանակում է, որ բոլոր շղթաներում այն սահմանելու է որոշակի գներ,- նշեց Լեւան Սիլագավան:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

«ԱՐՏԱԴՐԻ'Ր ՎՐԱՍՏԱՆՈՒՄ» ՄԻԿՐՈԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՆՈՐՀԻՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՆՈՒՄ Է

Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության «Արտադրի'ր Վրաստանում» գործակալության միկրո եւ փոքր ձեռներեցության խթանման դրամաշնորհային ծրագիրն ունի 1338 հաղթող:

Գերատեսչության տվյալներով՝ ծրագրի հայտերի ընդունումը սկսվել է այս տարվա մարտին: Ընդհանուր առմամբ, եզրափակիչ փուլ է անցել 3700 դիմորդ, որից հաղթել է 1338-ը: Ծրագրի նպատակն է՝ զարգացնել միկրո եւ փոքր բիզնեսը, ձեւավորել ժամանակակից ձեռնարկատիրական մշակույթ եւ ստեղծել նոր աշխատատեղեր: Ծրագրի դրամաշնորհի չափն այս տարի սահմանվել է 30 000 լարի, իսկ Եվրամիության ֆինանսավորմամբ, Վրաստանի կառավարության սկսած պիլոտային շրջանների ինտեգրված զարգացման ծրագրի շրջանակներում, սահմանված մարզերում (Իմերեթի, Ռաճա-Լեչխումի, Քվեմո Սվանեթի, Գուրիա եւ Կախեթի) դրամաշնորհը կազմել է 40 000 լարի:

Ծրագրում հաղթող ձեռներեցների մասնակցության չափը պետք է կազմի դրամաշնորհի գումարի առնվազն 20 տոկոսը, իսկ բարձրլեռնային բնակավայրերում՝ առնվազն 10 տոկոսը: Առկա շահառուի դեպքում շահառուի համամասնակցությունը պետք է կազմի դրամաշնորհի գումարի առնվազն 50 տոկոսը, իսկ բարձրլեռնային բնակավայրերում՝ առնվազն 25 տոկոսը: Ծրագրում հաղթող շահառուն պարտավոր է դրամաշնորհի չափի նպատակը սահմանել հետեւյալ կերպ՝ կապիտալ ծախսեր ոչ պակաս, քան 90 տոկոս, շրջանառու միջոցներ ոչ ավելի, քան 10 տոկոս: Ծրագրի շրջանակներում կֆինանսավորվի ավելի քան 300 տնտեսական գործունեություն: Միկրո եւ փոքր ձեռներեցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ 2015-2021 թվականներին ֆինանսավորվել է 6901 ծրագիր, իսկ ներդրումների ծավալը կազմել է ավելի քան 78 մլն լարի:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

«ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ԳՅՈՒՂԻՆ» ԾՐԱԳԻՐԸ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ Է

Նինոծմինդայի մունիցիպալիտետի գյուղերում ընթացքի մեջ են «Օգնություն՝ գյուղին» ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքները:

Այդ ծրագրով Ուչմանա գյուղում անցած տարի հիմք է դրվել նոր սպորտդահլիճի կառուցմանը: Այս տարի շարունակվել է սպորտդահլիճի շինարարության 2-րդ փուլը: Գումարը կազմում է 12 000 լարի:

Թորիա գյուղում նույնպես շարունակվելու է 2020 թվականին «Օգնություն՝ գյուղին» ծրագրով հիմք դրված մարզադահլիճի կառուցումը: Գումարը կազմում է 16 000 լարի:

Հեշտիա եւ Ղաուրմա գյուղերում աշխատանքները դեռեւս չեն սկսվել: Հեշտիա գյուղում նախատեսված է ճանապարհների հարթեցման համար 6000 լարի եւ ջրամբարի կառուցման համար՝ 14000 լարի, որը ծառայելու է խոշոր եղջերավոր կենդանիների համար: Ղաուրմա գյուղի համար հատկացվել է 12 000 լարի, որը նախատեսված է ճանապարհների հարթեցման համար:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ ԳՐԱՆՑԵԼ ԵՆ ՇՈՒՐՋ ՀԱԶԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ տարվա մարտ-հունիս ամիսներին Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի չորս մունիցիպալիտետներում գրանցվել է 936 ռուսական ընկերություն: Ռուսաստանի քաղաքացիների այդ ընկերությունները հիմնվել են Ադիգենիի, Ախալցիխեի, Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների գյուղերում: Ամենից շատ՝ 618 ընկերություն, գրանցվել է Ադիգենիի մունիցիպալիտետի Ունծա (429) եւ Վարխանի (189) գյուղերում, Ախալցիխեի մունիցիպալիտետի Աբի ավանում (314), եւս մեկը՝ Անդրիածմինդա գյուղում: Ախալքալաքիի մունիցիպալիտետում մեկական ռուսական ընկերություններ են գրանցվել Կուլիկամ եւ Իխտիլա գյուղերում, Նինոծմինդայի մունիցիպալիտետի Մեծ Խանչալիում:

ՂՐԻՄ-ԿՈՆԳՈ ՎԱՐԱԿԻ ԴԵՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ

Վրաստանի պարենի ազգային գործակալության անասնաբույժները, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում անց են կացնում Ղրիմ-Կոնգո վարակի դեմ ուղղված տեղեկատվական քարոզարշավ:

Գործակալության մասնագետները տեղի բնակիչներին տեղեկատվություն փոխանցեցին Ղրիմ-Կոնգո վարակի կանխման միջոցառումների, անասունների խնամքի եւ անրաժեշտ դեղորայքի մասին: Տեղի բնակչության հետ հանդիպումներում բաժանվեցին տեղեկատվական նյութեր, գյուղական հավաքատեղիներում փակցվեցին հանձնարարական գովազդներ:

Հիվանդության կանխման նպատակով, գործակալությունը բնակչությանը կոչ է անում սկսած գարունից մինչեւ վաղ աշուն, պահպանել անասունների անվտանգ խնամքի կարգը, դաշտում աշխատելիս՝ ինսեքտոակարիցիդային լուծույթով մշակել արտահագուստն ու կոշիկները, հիվանդության ախտանիշների բացահայտման դեպքում՝ անմիջապես դիմել բժշկին:

Նշենք, որ Ղրիմ-Կոնգո վիրուսը փոխանցվում է մարդուն՝ տիզերից ու ընտանի կենդանիներից: Անասունների մոտ այն ընթանում է առանց կլինիկական ախտանիշների, իսկ մարդկանց մոտ, ուշացած բուժման դեպքում, կարող է հանգեցնել մահվան:

«ՋԱՎԱԽԵԹԻ» ՀԱՄՈՒՅԹԸ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ

Ախալքալաքիի մունիցիպալիտետի մշակույթի տան «Ջավախեթի» պարի համույթը (պարուսույց՝ Գիորգի Մետրեւելի) վրացական պարային համարներով հանդես է եկել Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում:

Հաղորդագրությունը հրապարակած է Ախալքալաքիի քաղաքապետարանի կայքում՝ «Վրացական մշակույթի եւ Ջավախքի առաջխաղացումը Եվրոպայում» նախաբանով:

Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ